


ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԿՈԼԵՈԶՆԻԿԻ
ԳՐԱԿԱՆ-ԳԵ
ՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ



Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԲՈՒՐՄԻՍՏՐԸ

891.71

Կ-96

ՆԱԴՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — 1936

ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԿՈԼԽՈՋՆԻԿԻ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1949 թ.

89/71

ԿՆ-96

Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

19 NOV 2000

ԲՈՒՐՄԻՍՏՐԸ

Ա. Մ. ԼԻՆԻՆԻ

Քննադատական-կենսագրական ոչերկով

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՍՏՈՎ-ԴՈՆ - 1935

Ա. Մ. ԼԻՆԻՆ

Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

(ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ-ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՋԵՐԿ)

Իվան Սերգեևիչ Տուրգենևը և նրա ստեղծագործությունը ծնվել ու աճել են միջին կալվածատիրական ազնվականության միջավայրում:

Տուրգենևը ծնվել է 1818 թ. հոկտեմբերի 28-ին, Ուրյոլ քաղաքում: Նա իր մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել «ազնվականների բնում»:

Տիպիկ ճորտաժիրական ելին այն պայմանները, վորոնց մեջ մեծանում էր Տուրգենևը: Տուրգենևի հայրը, վոր մի անձնիշխան և դուրսաբերող մարդ էր, սանձարձակ վերաբերմունք ուներ վոչ միայն դեպի տան սպասավորներն ու ծառաները, այլև դեպի իր վորդու դաստիարակները: Մի անգամ (հիշում եմ հետագայում Տուրգենևը) հայրը բռնեց զերմանացի դաստիարակի ոձիքից, բարձրացրեց ողբ մեջ ու յերկրորդ հարկի սանդուխդներից վայր գլորեց նրան, հրամայելով սպասավորներին հավաքել նրա իրերն ու դուրս տանել: Սակայն տան մեջ ամենացայտուն դեմքը նրա մայրն էր՝ Վառվառա Պետրովնան: Լինելով «զգայական» ուսմանների սիրահար և չափազանց հոգատար այն բանին, վոր իր կալվածքում ունենա զեղեցիկ կահավորանք, ծաղկանոցներ, շերմոցներ, — Վառվառա Պետրովնան զգայականությունը և յեվրոպական «կուլտուրականությունը» զուգորդել էր իր մեջ ռուսական ճորտատիրական կամակործության հետ:

Հետևելով ցարերի բրնձակին, նա իր սպասավորներին «մինիստրներին» աստիճաններ էր բաշխում: Ուրինակ, սպասավորների պետը կոչվում էր «արքունիքի կամ պալատական մինիստր» և ժանդարմների շեֆ՝ Բենեկենդրոֆի ազգանունն էր կրում: Նամակներ ընդունող և ուղարկող



28449-60

տղան կոչվում եր «փոստի մինիստր»։ Ամբողջ նիստով կացը յենթարկված եր ֆեոդալական տրադիցիաներին։ Իշխանամուլ տիկնոջ առջև ամենքն եյին դողում։

«Մուսուլ» պատմվածքում Տուրքենիկ նկարագրած դեպքն իսկապես վոր պատահել է Վառվառա Պետրոֆլայի, նրա համր դռնապանի ու նրա շան հետ Մի ուրիշ դեպքի մասին ել հիշում է Ի. Ս. Տուրքենիկը Վառվառա Պետրոֆլայ Սիբիր ե քշում յերկու յերիտասարդի նրա համար, վոր իրեն հանդիպելիս՝ չեյին բարեմբել։ «Ահա այս պատուհանի առջև, — պատմում եր Ի. Ս. Տուրքենիկը, — նստած եր իմ մայրը. ամառ եր, և պատուհանը բաց, ու յես աչքերովս տեսա, թե ինչպես այս՝ Սիբիր քաղաքովորդները, գլխարկները հանած ու գլուխները կախ, մոտեցան պատուհանին, վոր գլուխ խոսարհին ու հրաժեշտի վողջույն տան նրան»...

Յերեխաների դաստիարակության սխառմում իրար զուգակցվել եյին արեւմայան փայլի և կալվածատիրական վարենության գծերը։ Մի կողմից՝ դաստիարակներ, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներ, գիցաբանություն, մյուս կողմից՝ ձկնորսով ծեծ. «Ինչ ծեծում եյին, — ասում է զորողը, — ամեն մի անշան բանի համար, համարյա ամեն ոք»...

Այս մասյլ տեսարանները, այս ստորագուցիչ պատկերները չեյին կարող Տուրքենիկ մեջ առաջ չբերել զգվանք դեպի ստրկությունը, դեպի կալվածատերերի կամայականությունը և համակրություն դեպի ճորտերը։

Չուր չե, վոր նա, դեռ պատանի հասակից, ատում է ճորտատիրական ռեժիմը։ «Յես 16 տարեկան եյի։ Ատելությունը դեպի ճորտատիրական ռեժիմըն արդեն այն ժամանակից եր ապրում իմ մեջ»...

Սակայն այսպիսի սպավորությունները հետ միասին կալվածատիրական կյանքը Տուրքենիկ մեջ ունեցել է նաև ազայական հայացքներ և սովորություններ։

Լիակատար ապահովված լինելը, սպասավորներ ծառայություններով ոգտվելու սովորությունը, ընկերների ու ծանոթների շրջանը, վորոնց մեծ մասը պատկանում եր նույն միջին կալվածատիրական միջավայրին, — այս բոլորը Տուրքենիկն կապում եր աղնավականական դաստակերտի հետ ու մեղմացնում, թուլացնում եր ստրկության հանգեպ նրա տածած բողոքի վճռականությունը։

1838 թվից Տուրքենիկ սովորում եր Մոսկվայի, ապա Պետերբուրգի համալսարանում, իսկ ավարտելուց հետո դասախոսություններ եր ըսում Բեռլինի համալսարանում։ Արտասահմանի կյանքը, ժամանակի առաջավոր մարդկանց հետ ունեցած շփումը ամբողջին Տուրքենիկ մեջ մաս-

կությունից ծագած դարշանքը դեպի ճորտատիրական կարգերն ու նպատակներն լիբերալ հայացքների զարգացմանը։

1841 թվին Ռուսաստան վերադառնալով, Տուրքենիկ չի կարողանում հաշտվել կյանքի հետաճաց ճորտատիրական ձևերի հետ, ինքնակալության դավադանաստ դիպիպլինայի հետ։

Միառժամանակ նա տատանման մեջ է և չգիտե ինչ զբաղմունք ընտրի. մտածում է իրիլիսոփայության պրոֆեսոր դառնալ, հետո ծառայության և մտնում է, վերջապես, 1844 թվից վերջնականապես վորոշում է նվիրել իրեն գրողի աշխատանքին։

Տուրքենիկ հասկանում եր, վոր պետք է վերջ ապ ճորտատիրական իրավունքին, քանի վոր նա կասեցրել եր հասարակական զարգացման ընթացքը։ Բայց նա չեւ ձգտում հեղափոխական ճանապարհով վերջացնել ճորտատիրական սխառմը. նա վախենում եր հեղափոխությունից, վորը կարող եր մշնչացնել նաև կալվածատերերի իշխանությունը։ Դրա համար Տուրքենիկ հույսը վոչ թե հարստահարված գյուղացիությունն եր, այլ առաջավոր, աղնավականներից դուրս յեկած, ինտիլիգենցիան, վորը՝ հենվելով հասարակաց կարծիքին, պետք է ապացուցեր կառավարության անհետաձգելի ռեֆորմների անհրաժեշտությունը։ Տուրքենիկ հայացքի այս կրիստալիցությունը գեղարվեստական արտահայտություն է գտել նաև նրա յերկերում։

Վոտանավորներից և պոեմներից սկսելով, Տուրքենիկ հարթեց իր տնկալ ուղին՝ վորպես հեղինակ «Վորսորդի հիշատակարանը» զրվածքի, վեպերի և ումանների («Ռուդին», «Հայրերն ու վորդիք», «Ազնվականները բույն», «Նով», և այլն)։

Ռուսաց և համաշխարհային գրականության մեջ Տուրքենիկ տեղ է զբաղվել ինքպես չափազանց ներհուն, յուրահատուկ մի գեղարվեստագետ, վոր ի ստեղծագործության մեջ լայնորեն պատկերացնում է 19-րդ դարի 40—70-ական թվականների ուս կյանքի ժամանակաշրջանը։ Հասարակական կյանքի վերաբերյալ հարցերում լինելով նրբազգաց, նա թողել է մի շարք գեղարվեստական պատկերներ ու նկարներ Ռուսաստանում տեղի ունեցած այն սոցիալական փոփոխությունների, վորոնք առաջացել եյին ճորտատիրական իրավունքի կործանման և կապիտալիստական հարաբերությունների աճման հետևանքով։ Այդ հեռավոր անցյալի գերկն անցած կյանքի մասին է, վոր պատմում է նա կլասիկ արվեստագետի հատուկ վաքսեությամբ։ Տուրքենիկ հերոսները պորտեն և բնավորությունն ինքնորինակ կերպով է պատկերագրում և քաջածանոթ է հոգե-

բանութիւն: Պեղած նկարելու արվեստում նա մնում է չգերազանցված մի վարպետ: Բնութիւնը նրա մոտ նրբերի թելերով հյուսված է հերոսների ապրումների հետ, նրանց հույզերի հետ: Հրաշալի յե Տուրգենևի լեզուն նրա գեղարվեստական գրվածքներում ուիթմի է յերաժշտականութիւն տեսակետից: Դրա հետ միասին Տուրգենևի լեզուն արտասովոր կերպով կանոնավոր է, գեղակազմ ու մաքուր: Նույնքան գեղակազմ է և պարզորոշ նրա գրվածքների կառուցվածքը:

Մատնացույց արված այս գծերն առանձնապես արտահայտվում են նաև նրա «Վորտրդի հիշատակարանից» գրվածքում:

* * *

«Վորտրդի հիշատակարանը» գրվածքը նրա այն պատմվածքներից է, վորոնց մեծագույն մասը գրված է 1847 — 1851 թվականներին: Այս ժողովածուի բոլոր պատմվածքները միավորված են միևնույն թեմայով՝ ճորտատեր-կալվածատերերի ու ճորտերի — և առավելապես ճորտ-սպասավորների — փոխարաբերութիւնների թեմայով: Նկարագրելով ճորտատերական իրավունքի ժամանակվա կալվածատիրոջ կալվածքը, տալով կալվածատերերի, կառավարիչների ու կալվածքում ապրող և նրան սպասարկող ծառաների պատկերների շարանը, Տուրգենևը կանգնած է նույն չափավոր-լիքերալ բողոքողի դիրքերում: Նա ցայտուն կերպով նշկարագրում է շահագործող-կալվածատերերի վայրագութիւնները: Նա ստորագծում է մաքուր՝ ճորտատերական սխտեմի որոք սովորական դարձած՝ կեղեքման փաստերը, յերբ գյուղացուն համարում էյին մի իր և վոչ թե մարդ, վոր ընդունակ է ապրելու, մտածելու, զգալու, հուզվելու: Նա տալիս է խոսուն, նուրբ զգացմունքի տեղ ու գեղեցիկութիւն համե իմացող գյուղացիների բանաստեղծական հուզիչ պատկերները: Բայց իր վոչ մի պատմվածքում նա չի թելադրում ընթերցողին՝ ճորտատիրական-ցարական ուժիմը հեղափոխութիւն ձեռքով տապալելու անհրաժեշտութիւն դադափաբը:

Բայց և այնպես մենք պարզապես տեսնում ենք, վոր «Վորտրդի հիշատակարանը» գրվածքի հեղինակը ճորտատիրութիւն թշնամին է: Կոնսերվատորները (պահպանողականները) «Վորտրդի հիշատակարանը» թշնամաբար ընդունեցին: Ժողովրդական լուսավորութիւն մինիստրը գեկուցել էր Նիկոլայ I ցարին, թե այս գրվածքում կալվածատերերը նկարագրված են ամենաանձեռնտու կողմից, հաճախ ծիծաղելի ու ծաղրա-

կան, իսկ ավելի հաճախ պարսավելի կողմերից: Գիրքը բաց թողնող գրաքննիչ Լվովը պաշտոնից հեռացվել էր:

Ամենից ավելի հետաքրքրական պատմվածքներից մեկն է հանդիսանում «Բուրմիստը»¹, վոր գրված է արտասահմանում, այնտեղ բժշկվող ախանավոր կրիտիկոս (քննադատ) Վ. Գ. Բելինսկու ազդեցութիւն: Այս պատմվածքը հաղեցված է ճորտատիրական իրավակարգի զազրելիութիւնը մերկացնող խորիմաստ բովանդակութիւն: Հեղինակն այստեղ պատկերագրում է լիբերալ (ազատամիտ) ազնվականի (վորտրդը) ճորտատիրական պայմաններում մեծացած կուլակի (Սոֆրոնը), տանուսպասավորի (Ֆյոդորը), գյուղացու (Անտիպը) պատկերները: Բայց ցնցող ուժգնութիւնով է նկարագրված այստեղ Արկադիյ Պավլովիչ Պենոչկինի, այդ բարեկիրթ, ճախարակված ճորտատիրոջ տիպը: Նրա տունը կառուցված է ֆրանսիացի ճարտարապետի պլանով: Պենոչկինի շարժաձեերը յեվրոպական են, բայց ստացած ֆրանսերեն լրագրերն ու գրքերը նա չի կարդում: Նա հրաշալի խոսում է ֆրանսերեն, սիրում է միշտ կրկնել, վոր նա իր հպատակների մասին է հոգ տանում, սակայն նրա մեղմ և դուրեկան ձայնի տակ, նրա արտաքին քաղցրաբարոյութիւն տակ թաքնվում է վայրենի ճորտատիրոջ դաժան և սասնասիրտ բնավորութիւնը: Մեղավոր ճանաչված սպասավորին նա ինքը չի պատժում, այլ իր խոսակցից (կալվածատեր) ներողութիւն խնդրելով՝ կիսաձայն հրամայում է. «Ֆյոդորի նկատմամբ... կարգադրե՛ր: Յեվ մինչ խարաղանում են դժբախտ կամերգիներին»², վոր մոռացել էր գինին տաքացնել, նա ֆրանսիական ումանս է յերգում: Պենոչկինի բնավորութիւնն ավելի ցայտուն կերպով յերեւան է դալիս չքավոր Անտիպի ու սրա վորդու հետ ունեցած խոսակցութիւն ժամանակ:

ճորտատիրական իրականութիւն մութ կողմերը դատապարտելով Տուրգենևը՝ հանձին Պենոչկինի՝ կուլտուրայի դիմակն է պատռում նաև լիբերալութիւն անող, արտաքուստ հեղահամբյուր ու մարդասեր կալվածատիրոջ յերեսից: Այս պատկերի մեջ մարմնավորված գծերը հետադայում ևս շարունակում էյին իրենց գոյութիւնը, փոխելով միայն իրենց ձևը:

Ահա ինչու, խարաղանող սարկազմով (հեգնանքով) և կծու ատելութիւն մերկացնելով ուս կալվածատերերի ճորտատիրական էյութիւնը, կալվածատերերի, վորոնք արտաքուստ չափազանց «մարդասեր» էյին,

¹ Բուրմիստը — կալվածքի կառավարիչ:

² Կամերգիներ — սենեկապան:

խիկ ըստ ելուցման — ֆեոդալներ, Վ. Ի. Լենինը, այսուրիսակ «մարդասերներից» մեկին՝ Լյուս Զեյդենին նվիրած մահախոսականում, այս վերջին ընտելացրի հետ կապեց Պենոչկինի պատկերը:

«Զեյդենը «մարդ» էր, հիացմունքից շնչասպարհ է լինում սալոնային դեմոկրատը: Զեյդենը «մարդասեր» էր:

Զեյդենի մարդասիրությամբ սքանչանալու այս յերևույթը մեզ ստիպում է մտաբերել վոչ միայն Նեկրասովին և Սալտիկովին, այլ Տուրգենևի «Վորոբյուրի հիշատակարանը»: Մեր առաջին է քաղաքակրթված, ուսում առած մի կալվածատեր, կուլտուրական մարդ, վարվեցողության կիրթ ձևերով, յեվրոպական փայլ ստացած: Կալվածատերը գիտի յե հրամցնում հյուրերին և վեհ առարկաների մասին զրույց անում հետը: «Խոչձե գիտին չի տաքացրված», — հարցնում է նա սպասավորին: Սպասավորը լուռ կանգնած գունատվում է: Կալվածատերը զանգահարում է և առանց ձայնը բարձրացնելու, ասում է ներս մտնող ծառային՝ «Փյոդորի նկատմամբ... կարգադրել»:

Ահա ձեզ հեյդենյան «մարդասիրություն» կամ *a la* Զեյդեն մարդասիրության մի նմուշ: Տուրգենևի կալվածատերը նույնպես «մարդասեր» է... Սալթիկինիսայի՝ համեմատությամբ նա, որինսակ, այնքան մարդասեր է, վոր ինքը չի գնում ձիանոց, վորպեսզի տեսնի, թե արդյոք լավ են կարգադրել Փյոդորի խաբազանում: Նա այնքան մարդասեր է, վոր հոգ չի տանում այն մասին, վորպեսզի Փյոդորին ծեծելու ճիպտաները տղա-ջրի մեջ թրջեն: Նա, այս կալվածատերը, թույլ չի տա իրեն վոչ լուրի, վոչ էլ հայտյոյ սպասավորին, նա միայն հեռվից «կարգադրում է», վորպես կրթված մարդ, մեղմ և մարդասեր ձեվերով, առանց արմուկի, առանց սկանդալի, «առանց հրապարակական ցուցադրության»:

Հիշեցնելով Տուրգենևի այս պատկերի մասին, Լենինը դրանից հետո վարպետորեն զարգացնում է Լյուս Զեյդենի համեմատական քաղաքական պատկերը:

«Բոլորովին այսպես է նաև Զեյդենի մարդասիրությունը: Լուսինովս-կիններ ու Ֆլյուրովներ հետ նա անձամբ չեւ մասնակցում գյուղացի-ների ծեծին և խռատագործներին: Նա Ռենենկամֆներ և Մեկեր-Ջա-կոմբլիկներ հետ միասին չեւ գնում պատժական արշավանքի: Նա գնալահար չեւ անում Մոսկվան Դուբասովի հետ միասին: Նա այնքան

մարդասեր էր, վոր նման սխաղործություններից ձեռնպահ էր անում, համառուսական «ձիանոցի» նմանորինակ հերոսների տրամադրությամբ հանձնելով «կարգադրել» և իր խաղաղ ու կուլտուրական կարենետի անդորություն միջից դեկավարելով այն քաղաքական կուսակցությունը, վորն աջակցում էր Դուբասովներ կառավարությանը և վորի առաջնորդները խմում էին Մոսկվային հաղթող Դուբասովի կենացը... Միթե սա իսկապես վոր մարդասիրություն է, փոխանակ վոր ինքը գնա ձիանոց, Դուբասովներին ուղարկել՝ «Փյոդորի նկատմամբ կարգադրել»... Պառավ կանանց համար, վորոնք վարում են մեր լիբերալ և դեմոկրատիկ մամուլի քաղաքական բաժինը, դա մարդասիրության որինակ է...— Վոսկի մարդ էր, ճանձի սիրտն էլ չէր ցավացնի: «Հաղվադեպ և յերջանիկ վիճակ է»՝ Դուբասովներին աջակցել, Դուբասովների բռնությունների արդյունքներից ուղարկել և Դուբասովների համար պատասխանատվություն չկրելը»:

Այստեղ, Տուրգենևի պատկերից վերցված վկայականումը աճում է մի ցայտուն քաղաքական պամֆլետ:

Վոչ նվազ հաջող է, բայց այլ կապակցությամբ և ուրիշ առթիվ Լենինի ոգտագործած՝ Տուրգենևի նույն պատկերը «Ներքին տեսություն» մեջ: Այստեղ Լենինը խոսում էր ցարական կառավարության անկարեկից ու յերկերեսանի վերաբերմունքի մասին սոված գյուղացիների հանդեպ:

«Տուրգենևի քաղաքակրթված կալվածատերը վոչ միայն ինքը չեւ գնում ձիանոց, այլ բավականանում էր Ֆրակ ու սպիտակ ձեռնոցներ հագած լսելի միջոցով արված կիսաձայն նկատողությամբ՝ «Փյոդորի նկատմամբ... կարգադրել»: Ահա և՛ մեզ մոտ այժմ «առանց աղմուկի», սուս-փուս, աղնվաբար «կկարգադրեն» սանձահարել սովի մատնված բնակ-ություն վոչ-չափավոր ախորժակները»:

Պենոչկինի գեղարվեստական պատկերը, վոր մարմնավորել է իր մեջ շահագործողական «մարդասիրության» և «կուլտուրայի» տիպիկ գծերը, կեղծիչների դաժանությունը և կեղծավորությունը, ոգնում է մեզ լավագույն տեսնել նաև արդի կապիտալիզմի բաղադրիչ քաղաքական գործիչների իսկական դեմքը, վորոնք արտաքին «կուլտուրականություն», «բարեհոգություն» և «խաղաղասիրություն» բառական դիմախի տակ թագնում են իրենց իսկական շահագործչական գազանային ելույթունը և ավազակային ախորժակները:

¹ Սալթիկին — 18-րդ դարի հայտնի կալվածատիրուհի, բացառիկ վայրագ բնավորություն ցուցաբերող գեպի ճորտ գյուղացիները (նույն-իսկ այն սոսկալի ժամանակներում):

¹ Վ. Ի. Լենին, Յերկ. Ժող., 2-րդ հրատ., հատ. XII, էջ 9—10.

² Վ. Ի. Լենին, Յերկ. Ժող., Հատ. IV, էջ 296.

Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ՔՈՒՐՄԻՍՏՐԸ

Իմ կալվածքից տասնհինգ վերստաչափ հեռու ապրում ե
ինձ ծանոթ մի մարդ, յերիտասարդ կալվածատեր, պաշտո-
նաթող գվարդիական սպա՝ Արկադիյ Պավլիչ Պենոչկինը։
Նրա կալվածքում կան վորսի բազմաթիվ կենդանիներ, տունը
շինված ե ֆրանսիացի ճարտարապետի պլանով, սպասա-
վորները հագնված են անգլիական տարազներ, հրամցնում
ե յերևելի ճաշեր, հյուրերին ընդունում ե սիրալիր կերպով.
բայց չնայած այդ բոլորին հաճույքով չեա գնում նրա մոտ։
Խոհեմ ե վճռական մարդ ե նա. ստացել ե, ինչպես այդ սո-
վորական ե, հիանալի կրթություն, ծառայել ե, բարձր շըր-
ջաններում յելուծուտ ե ունեցել, իսկ այժմ մեծ հաջողու-
թյամբ տնտեսությամբ ե զբաղվում։ Արկադիյ Պավլիչն, իր
խոսքերով ասած, խստապահանջ, բայց արդարամիտ մարդ
ե, հոգ ե տանում իր հպատակների բարորության մասին ու
պատժում ե նրանց՝ նրանց իսկ բարիք արած լինելու հա-
մար։ «Նրանց հետ հարկավոր ե վարվել այնպես, ինչպես
յերեսխաների հետ, — ասում ե նա այդպիսի դեպքերում, —
տգես են, *mon cher, il faut prendre cela en consideration*»
(իմ սիրելիս, այդ պետք ե ուշադրության առնել)։ Իսկ ինքը,
այսպես ասած տխուր անհրաժեշտության դեպքում, կոպիտ
ե ուժգին շարժումներից խուսափում ե ու չի սիրում ձայնը

բարձրացնել, այլ հաճախ ձեռքերն ուղիղ դեպի առաջ ցցե-
լով հանդիստ կերպով ասում եր. «Ախր սիրելիս, յես քեզ
խնդրել եմ», կամ «Ի՞նչ ե պատահել քեզ, բարեկամս, խելքի
յեկ» ու այդ ասելով միայն թեթևակի ատամներն ե սեղմում
և բերանը ծռում: Ինքը վոչ բարձրահասակ, խիստ վայել-
չակազմ ու շատ սիրուն մարդ ե, ձեռքերն ու վոտքերը չա-
փազանց մաքուր ե պահում. նրա կարմիր շրթունքներից ու
թշերից առողջութուն ե կաթում: Ծիծաղում ե հնչուն ձայ-
նով և անփույթ կերպով, քաղցրությամբ կկոցում ե պայ-
ծառ, թուխ աչքերը: Հագնվում ե շատ լավ ու ճաշակով.
բերել ե տալիս ֆրանսերեն գրքեր, նկարներ և լրագրեր,
բայց կարդալու շատ սեր չունի. «Թափառական հրեյան»²
հազիվ վերջացրեց:

Քարտ ե խաղում վարպետորեն: Ընդհանրապես Արկադիյ
Պավլիչը համարվում ե մեր նահանգի ամենակրթված ազ-
նվականներից ու նախանձելի փեսացուներից մեկը. կանայք
հիացած են նրանով, մանավանդ գովում են նրա շարժու-
ձեերը: Նա զարմանալի լավ պահել պիտե իրեն, զգուշ ե
ինչպես կատուն, ու կյանքում վոչ մի փորձանքի մեջ գլուխը
խառը չի յեղել, թեև տեղն յեկած ժամանակ իր արժեքը
ցույց տալ և վախկոտ մարդկանց շշմեցնել ու բերանները
փակել սիրում եր: Վատ հասարակութունից բացարձակա-
պես խորշում ե — վախենում ե վարկաբեկվել. դրա փոխարեն
յերբ քեֆը տեղն ե լինում, իրեն Եպիկուրի² յերկրպագու
յե հրատարակում, թեև ընդհանրապես փիլիսոփայության
մասին վատ ե արտահայտվում, անվանելով այն գերմանա-
կան մտքի մշուշապատ սնունդ, իսկ յերբեմն ել — պարզա-
պես հիմարութուն: Նա յերաժշտութուն նույնպես սիրում ե

քարտ խաղալիս, քթի տակով յերգում ե, բայց զգաց-
մունքով. Լյուչիայից և Սուսնամբուլայից¹ հիշում ե նույն-
պես ինչ-վոր կտորներ, սակայն տոնը շատ ե բարձրաց-
նում: Ձմեռները նա Պետերբուրգ ե գնում: Նրա տանը ար-
տասավոր կարգ ու կանոն ե տիրում. մինչև անգամ կառա-
պանները յենթարկվել են նրա ազդեցությանն ու ամեն որ
վոչ միայն մաքրում-սրբում են ձիերի անուրները (խոմուտ-
ները) և իրենց արմյակները, այլ իրենց յերեսն են լվանում:
Արկադիյ Պավլիչի տանու սպասավորները, ձիառ ե, ինչ-վոր
խեթ-խեթ են նայում, — բայց մեղ մոտ, Ռուսաստանում,
մուսյինն ու քնատին իրարից չես ջոկի: Արկադիյ Պավլիչը
խոսում ե մեղմ ու դուրեկան ձայնով, յերբեմն կանգ առ-
նելով, ու կարծես հաճույք ե զգում, յերբ յուրաքանչյուր
խոսքն արտասանում ե իր սիրուն, անուշահոտություններով
ոծված բեխերի միջով. նմանապես շատ ե գործածում ֆրան-
սերեն դարձվածքներ, ինչպես՝ «Դա աննման ե»: «Դե ինչ-
պես ուրեմն» և այլն: Այնուամենայնիվ, յես, գոնե, շատ
հաճույքով չեմ հաճախում նրան ու, յեթե չլինեյին մայրա-
հավերը և կաքավները, հավանորեն, բոլորովին ել ծանո-
թությունս նրա հետ կխզեյի: Ինչ-վոր տարրինակ անհան-
գստություն ե տիրում ձեզ նրա տանը. ձեզ չի հրապուրում
նույնիսկ կոմֆորտը², և ամեն անգամ յերեկոյան, յերբ ձեր
առաջն ե գալիս խոճոճած մագերով կամեղդինները³ կապ-
տագույն լիվերը⁴ հագին, վորի կոճակները կրում են պե-
տական գերբի նշանը, և սկսում ե ստորաքարշությամբ հա-
նել ձեր կոշիկները, դուք զգում եք, վոր, յեթե նրա գու-

¹ Ոպերաների անուններ.

² Կոմֆորտ — շքեղ սաքքավորում, փարթամութուն.

³ Կամերդիններ — սենեկապան.

⁴ Լիվերը — սպասավորների զգեստի վորոշ տարագ.

¹ Ֆրանսիացի գրող Եփեն-Սյուրի ումանը.

² Եպիկուր — հին հունական փիլիսոփա.

նա առ ու նիհար ֆիզուրի փոխարեն դուք ձեր առջև տես-
նեյիք առողջակազմ մի յերիտասարդի զարմանալի լայն թը-
շերը և անասելի տափակ քիթը, յերիտասարդի, վորին տերը
դեռ նոր վերցրել է արորի մոտից և վորի նոր նվեր ստա-
ցած ու նանկայից¹ կարած կաֆտանի կարերը տասը տե-
ղից արդեն քանդվել են, — անասելի ուրախ կլինեյիք դուք
և սիրով կենթարկեյիք ձեր անձն այն վտանգին, վոր կա-
րող եր զրկել ձեզ կոշիկների հետ միասին նաև վոտքերից՝
մինչև ազդրի վերին հոդը:

Զնայելով իմ՝ դեպի Արկադիյ Պավլիչը տածած դժկա-
մակությանս, ինձ մի անգամ վիճակվեց գիշերել նրա մոտ:
Հետևյալ ուրը, վաղ առավոտյան, յես հրամայեցի լծել կառ-
քըս, բայց նա չուզեց ինձ թողնել առանց անգլիական ձևի
նախաճաշ հրամցնելու ու տարավ ինձ իր կարինետը: Թեյի
հետ միասին մեզ հրամցրին կոտլետ, թերխաշ ձու, կարագ,
մեղր, պանիր և այլն: Յերկու սպասավոր, սպիտակ մաքուր
ձեռնոցներով, արագությամբ և անխոս կանխում եյին մեր
ամենաչնչին ցանկութունները: Նստած եյինք պարսկական
բազմոցի վրա: Արկադիյ Պավլիչը հագած եր լայն մետաքսե
վարտիք, սև մախմուրե բաճկոնակ, կապտագուլն ծոպերով
մի գեղեցիկ ֆես և չինական դեղնագուլն հողաթափներ, կրճն-
կամասը բաց: Նա թեյ եր խմում, ծիծաղում, յեղունդ-
ներն եր դիտում, ծխում, բարձերն իր կողքերի տակն եր դը-
նում և ընդհանրապես չափազանց լավ տրամադրության մեջ
եր գտնւմ իրեն: Կուշտ և ակնհայտնի հաճույքով նախա-
ճաշն անելուց հետո Արկադիյ Պավլիչը լցրեց իրեն մի գա-
վաթ կարմիր գինի, մոտեցրեց շրթունքներին և հանկարծ
հոնքերը կիտեց:

¹ Նանկա — բամբակե զործվածք.

— Ինչո՞ւ դինին տաքացրված չե, — հարցրեց նա բավա-
կան խիստ ձայնով սպասավորներից մեկին:

Սպասավորը շշկվեց, քարացածի պես կանգնեց ու գու-
նատվեց:

— Ախր յես քեզ եմ հարցնում, սիրելիս, — հանգիստ կեր-
պով շարունակեց Արկադիյ Պավլիչը, աչքերը նրան հառած:
Վոդորմելի սպասավորն ինքն իրեն կորցրեց, սկսեց վո-
լորել անձեռոցիկն ու վոչ մի խոսք չստաց: Արկադիյ Պավ-
լիչը դուրսը խոնարհեցրեց և մտածմունքի մեջ ընկած՝ աչ-
քերի տակով նայեց նրան:

— Pardon, mon cher (ներեցիք, իմ սիրելիս), — արտա-
սանեց նա քաղցր ժպիտը յերեսին, ձեռքերով մոել մաքար
կլավ ծնկներիս ու նորից աչքերը սևեռեց սպասավորին:

— Դե գնա, — ավելացրեց նա փոքր լուռթուռնից հետո,
հոնքերը վեր քաշեց ու զանգահարեց: Մտավ մի հաստ, թը-
խադեմ, սև մազերով, նեղ ճակատով և բոլորովին ճարպա-
կալած աչքերով մարդ:

— Ֆյոդորի նկատմամբ... կարգադրել, — ասաց Արկադիյ
Պավլիչը կիսաձայն և լիակատար ինքնազսպվածությամբ:

— Լսում եմ, -- պատասխանեց հաստն ու դուրս յեկավ:


— Voilà, mon cher, les des sacrements de la campagne
(ահա, սիրելիս, գյուղական կյանքի անախորժությունները), —
ուրախությամբ վրա բերեց Արկադիյ Պավլիչը: — Բայց ինչո՞ւ
յեք դնում. մի քիչ ել մնացեք, նստեք:

— Վոչ, — պատասխանեց յես, — ժամանակ ե գնալու:

— Իհարկե, դարձյալ վորսի: Ախ, ի՜նչ ասեյի ձեզ վոր-
սորդներիդ: Բայց ուր եք գնում դուք հիմա:

— Այստեղից մի քառասուն վերստ կլինի, Ռյաբովո:

— Ռյաբովո: Ախ, տեր իմ աստված, դե վոր այդպես ե,
յես ել եմ գնում ձեռքս Ռյաբովո ընդամենը հինգ վերստ



հետո յե իմ Շիպիրովկայից, իսկ յես վաղուց ե Շիպիրովկայում չեմ յեղել, ժամանակ չեյի գտնում գնալու: Այս շատ լավ յեղավ. այսոր դուք Ռյաբովոյում վորս էանեք, իսկ յերեկոյան ինձ մոտ կգաք: *Ce sera charmant* (այդ հրաշալի կլինի): Միասին կընթերենք, — հետներս խոհարարին կվերցնենք, — դուք իմ մոտ կգիշերեք: Հիանալի կլինի, հիանալի — ավելացրեց նա չսպասելով իմ պատասխանին: — *C'est arrange* (այս վճռած է): Հէյ, ով կա այնտեղ: Հրամայեցե՛ք՝ կառքը լծեն, շուտով: Դուք Շիպիրովկայում չե՞ք յեղել: Յես կքաղվեյի ձեզ առաջարկել գիշերն անցկացնել իմ բուրմիստրի՝ խրճիթում, բայց գիտեմ, վոր դուք պահանջկոտ մարդ չեք, Ռյաբովոյում խոտնոցում ել կգիշերենք... Գնում ենք, գնում:

Յեվ Արկադիյ Պավլիչը յերգեց ինչ-վոր Ֆրանսիական ռոմանս²: Դուք հո, շատ կարելի յե, չգիտեք, — շարունակեց նա, վոտքերի վրա թեթևակի յերերալով, — ինձ մոտ այնտեղ գլուղացիները ոբրոկի³ յեն անցած: Կոնստիտուցիա⁴ յե — ինչ արած: Բայց բահրան կանոնավոր կերպով են վճարում ինձ: Յես, ճիշտն ասած, նրանց վաղուց բարշինայի⁵ (կոռ ու բիգար) կանցկացնեյի, բայց հողը քիչ է: Յես դեռ զարմանում եմ, թե ինչպես են նրանք ծայրը ծայրին հասցնում: Ասենք՝ *c'est leur affaire* (այդ իրենց գործն է): Իմ բուրմիստրը կտրիճ մարդ է, *forte tête* (խելքը գլխին է),

¹ Բուրմիստր — կավածքի կառավարիչ, մեծ մասամբ ճորտերից.

² Ռոմանս — յերգ.

³ Ոբրոկ — դրամով և մթերքով մուծումները, վոր ճորտ գլուղացիները պարտական եյին վճարել կավածատիրոջը՝ անձամբ աշխատելու փոխարեն (բահրա).

⁴ Կոնստիտուցիա — այստեղ նշանակում է սահմանված կանոն, տրբալված կարգ.

⁵ Բարշինա — (կոռ ու բիգար) ճորտերի ձրի աշխատանքը կավածատիրոջ համար.

պետական մարդ է: Այ կտեսնեք... Իսկուպես ինչ լավ յեղավ այս:

Ճար չկար: Առավոտյան ժամը իննի փոխարեն ճամբարնականք յերկուսին: Վորսորդների համար հասկանալի կլինի անհամբերությունս: Արկադիյ Պավլիչն, ինչպես ինքն երասում, սիրում եր հարմար դեպքում փոքր ինչ փայփայել իրեն և նա հետը վերցրեց անթիվ-անհամար այնքան ճերմակեղեն, ուտելիք, խմելիք, ոծանելիքներ (դուխի), բարձեր ու զանազան նետեսներն¹, վոր այդ բարիքը մեկ տարվա կքավեր մի վորեւ սակավապետ և իրեն զսպել գիտցող գերմանացու համար: Արկադիյ Պավլիչն, ամեն անգամ սարից իջնելիս, կարճ, բայց ազդու քարոզ եր կարդում կառապանի գլխին, վորից յես կարող եյի յեղրակացնել, վոր ծանոթա կարդին վախկոտներից ե: Սակայն մեր ճամբորդությունն անցավ շատ հաջող. միայն թե մի փոքր առաջ նորոգված կամրջակի վրա խոհարարի նստած սայլը շուռ յեկավ, և հետևի անիվը ճմլեց նրա փորը:

Արկադիյ Պավլիչը իր տնաստուն Կարեմի² վայր գլորվելը տեսնելիս, շատ վախեցավ և իսկույն հրամայեց հարցնել՝ ձեռքերն արդյո՞ք անվնաս են: Յեվ ստանալով դրական պատասխան, անմիջապես հանգստացավ: Ինչևիցե, գնում պատասխան, անմիջապես ժամանակ յես Արկադիյ Պավլիչի եյինք բավական յերկար ժամանակ. յես Արկադիյ Պավլիչի հետ նստած եյի մի կառքում. մեր ճամբորդություն վերջում մահացու թախիժ յեկավ վրաս, մանավանդ վոր մի քանի ժամ շարունակ ծանոթա համը հոտը կորցրեց և սկսեց արդեն լիբերալություն³ անել: Վերջապես հասանք, բայց վոչ

¹ Նետեսներ — լվացվելու, սափրվելու և այլ պեսպես պտրագաների արկղիկ.

² Կարեմ — ժամանակի հայտնի Ֆրանսիացի խոհարար.

³ Լիբերալություն — այստեղ ազատ մտքերի իմաստով.

Թե Ռյաբովո, այլ ուղղակի Շիպիլովկա. չգիտեմ, այդ Լոնչ-
պես պատահեց: Նույն ուրը յետ առանց այդ ել արդեն չեյի
կարող վորոքի գնալ, ուստի և, ակամա հնազանդվեցի ճա-
կատագրիս:

Խոհարարը հասել եր մեղանից մի քանի ըոպե առաջ
և, ըստ յերևույթին, արդեն կարողացել եր կարգադրել և
ուժը հարկավոր ե նախազգուշացնել, վորովհետև հենց գյուղի
ցանկապատի մուտքի առաջ մեզ դիմավորեց գյուղի տանու-
տերը (բուրմիստրի վորդին), պնդակաղմ և շեկակարմիր մի
գյուղացի, սաթենաչափ հասակով, ձի հեծած ու առանց
գլխարկի, հագին նոր արմյակ՝ կոճակներն արձակած:

— Իսկ ուր ե Սոֆրոնը, — հարցրեց նրան Արկադիյ
Պավլիչը:

Տանուտերը նախ շտապելով ցած թռավ ձիուց, խոնարհ
գլուխ տվեց տիրոջն ու ասաց.

— Բարով ես յեկել, ադա Արկադիյ Պավլիչ. ապա միքիչ
գլուխը բարձրացրեց, ուժը հավաքեց և գեկուցեց, վոր Սոֆ-
րոնը Պերով ե գնացել, բայց նրա հետևից արդեն մարդ եմ
ուղարկել:

— Դե, յեկ մեր հետևից, — ասաց Արկադիյ Պավլիչը:
Տանուտերը, քաղաքավորութուն բանեցնելով, ձին մի կողմ
քաշեց, ապա հեծավ ու թեթևարշավ սկսեց չափ տալ կառքի
հետևից, գլխարկը ձեռքը բռնած: Մենք անցնում եյինք գյուղի
միջով: Մեր դիմաց յերան դատարկ սայլերով մի քանի գյու-
ղացիներ. նրանք կալից եյին գալիս ու յերգեր յերգում,
ամբողջ մարմնով վեր վեր թռչելով և ողի մեջ վոտքերը ձո-
ճելով. բայց հենց վոր տեսան մեր կառքն ու տանուտիրոջը՝
խկուշն լռեցին, հանեցին իրենց ձեռքի գտակները (ամառ
յեղանակ եր), տեղներից քիչ բարձրացան, ասես հրամանի

եյին սպասում: Արկադիյ Պավլիչը վորորժաժաբար բարեկց
նրանց: Ըստ յերևույթին, գյուղով մեկ ծավալվեց մի ան-
հանգիստ հուզմունք: Վանդակավոր գործվածքից կարած դե-
րյաներ հագած կնանիք ծիղեր եյին նետում գլխի չընկնող
կամ չափազանց ջերմեռանդ շների վրա. կաղ վոտքով մի
ծերուկ, վորի մորուքն իսկը աչքերի տակից եր սկսվում,
ջրհորի բերանից մի կողմ քաշեց դեռ լրիվ չջրած ձիուն,
անհայտ պատճառով խիեց նրա կողքին, ապա բարե տվեց:
Յերեխաները, յերկար շապիկները հագին, վայնասուճով
խրճիթներն եյին վազում, փորի վրա պառկում բարձր շեմ-
քին, գլուխները կախ գցում, վոտքերը վեր տնկում և այս
ձևով, շատ ճարպիկ կերպով, դռն մյուս կողմն եյին ծուլ
անում մուլթ սրահը, վորտեղից այլևս չեյին դուրս գալիս:
Մինչև անգամ հավերն ել շտապ վազեցին դեպի դարպասի
անցքը. խիզախ աքլորի մեկն, ատլաս ժիլետի նմանող սև
կրճքով և մինչև կատարը մոլորած կարմիր պոչով, մեկ ու-
գեց սիրտ անել, ֆնալ ճամբու վրա և արդեն բոլորովին պատ-
րաստ եր իր ծուղորուղուն կանչելու, բայց հանկարծ շփոթ-
վեց ու նույնպես փախավ: Բուրմիստրի խրճիթը մյուսնե-
րից հեռու յեր շինված, խիտ, կանաչ կանեփուտի մեջտե-
ղում: Մենք կանգ առանք դարպասի առջև: Պահ Պենոչ-
կինը տեղից յեկավ, գեղեցիկ շարժումով հանեց թիկնոցը
(պլաշ), կառքից ցած իջավ, քաղցրութամբ աչք ածեց
շուրջը: Բուրմիստրի կինը դիմավորեց մեզ խոնարհ վող-
ջույններ տալով և մոտեցավ աղայի ձեռքը համբուրելու:
Արկադիյ Պավլիչը թույլ տվեց, վոր համբուրի ուղածին չափ
և սանդուխքով դեպի մուտքը բարձրացավ: Սրահում, մուլթ
անկյունում, կանգնած եր տանուտիրոջ կինը, վոր նույն-

1 Պ-ն — «պարոն», բառի համառոտագրութունը.

պես վողջունեց, բայց ձեռքերն համբուրելու համարձակություն չունեցավ: Սրանից դեպի աջ, այսպես կոչված պաղ խրճիթում, յերկու կանայք, բան ու գործի եյին արդեն: Նրանք այնտեղից դուրս եյին հանում ամեն տեսակ անպետք իրեր, փայտե դատարկ ամաններ, փայտի նման չորացած բուրբեր, յուղի կճուճ-պտուկներ, փալասներով լիքը մի որորոց՝ խայտաճամուկ լաթերով փաթաթված յերեխայով, բաղնիքի ավելներով եւ աղբն եյին հավաքում: Արկաղիյ Պավլիչը նրանց այնտեղից դուրս արավ ու նստեց յերկար նստարանին, սուրբ պատկերների տակ: Կառապաններն սկզսեցին ներս կրել սնդուկները, լարեցները¹ և այլ հարմարանքներ, ջանալով ամեն կերպ չափավորել իրենց ծանր կոշիկները թխկթխկոցը:

Մինչ այդ Արկաղիյ Պավլիչը հարց ու փորձ եր անում տանուտիրոջը բերքի մասին, ցանքսի և գյուղատնտեսության այլ առարկաների մասին: Տանուտերը տալիս եր գոհացուցիչ պատասխաններ, բայց դանդաղ և անհամարձակ, հենց իմանա՞ս՝ ցրտատար մատներով կափտանն եր կոճկում: Նա կանգնած եր դռան մոտ և շարունակ մի կողմ եր քաշվում ու հետ նայում՝ ճանապարհ տալով արագաշարժ սպասավորներին: Նրա լայն թիկունքի հետևից ինձ հաջողվեց տեսնել, թե ինչպես բուրմիստրի կինը սրահում, թաքուն կերպով, ծեծում եր մի ինչ-վոր ուրիշ կնոջ: Հանկարծ լավեց սայլի թխկթխկոց, նա կանգ առավ արտասանողաբար առջև. ներս մտավ բուրմիստրը:

Այս, Արկաղիյ Պավլիչի խոսքերով, պետական մարդը, հասկով բարձր չեւ. նա թիկնավետ եր, արեւոր և ամրակազմ, կարմիր քթով, փոքրիկ կապտագույն աչքերով և հովհարի

նմանող մորուքով: Իդեպ նկատենք, վոր Ռուսաստանի սկզբընավորությունից իվեր չի յեղել մի որինակ, վոր մարդ ասածդ չաղանա, հարստանա ու լայն փռված մորուք չունենա. կամարդ, վոր իր ամբողջ կյանքում ունեցել ե ցանցառ սեպածե փոքրիկ մորուք, — ու մեկ ել տեսար, հանկարծ նրա ամբողջ յերեսն ասես ճաճանչապսակով շրջափակվեց, — վորտեղից ե այնքան մաղը: Բուրմիստրը, յերեւի, Պերովում կոնծելեւ յերեսը կարգին ուռած եր, վրայից ել գինու հոտ եր գալիս:

— Ա՛խ բարեբար տերս, վողորմած աղմս, — ծոր տալով խոսեց նա այնպիսի խանդաղատանքով, վոր հենց իմանաս իսկույն արցունքներն են թափվելու, — վերջապես բարեհաճեցիք շնորհ բերելու... Ձեռքդ, վողորմած տերս, ձեռքդ, — ավելացրեց նա, արդեն առաջուց շրթունքները մեկնելով:

Արկաղիյ Պավլիչը բավարարեց նրա ցանկությունը:

— Նո՛ւ յեղբայր Սոֆրոն, ի՞նչպես են գործերդ, — հարցրեց նա սիրալիր ձայնով:

— Ա՛խ դուք, մեր հայրեր, — բացականչեց Սոֆրոնը, — զե վո՞նց կարան գեշ լինել մեր գործերը. ախար դուք մեր հայրերն եք, մեր բարերարները, ես մեր պատիւի գեղն ուղեցիք լուսավորել ձեր գալով. ես պատիվը մինչի գերեզմանը չենք մոռանա: Փա՛ռք ասածու, Արկաղիյ Պավլիչ, փա՛ռք ասածու, ձեր վողորմությամբ ամեն բան աջող ա գնում:

Այստեղ Սոֆրոնը մի փոքր լուռ մնաց, նայեց տիրոջը և, ասես նորից զգացմունքի հորձանքով բռնված (գինովությունն ել իրա գործն եր տեսնում), դարձյալ ուղեց ձեռքը և առաջվանից ել ավելի սկսեց ծոր տալ:

— Ա՛խ, դուք հայրեր մեր, բարերարներ... ել... ի՞նչ ասեմ. ուրախությունից, աստված վկա, խելքս կորցրել եմ... աստված վկա, նայում եմ ու աչքերիս չեմ հավատում... Ա՛խ, դուք հայրեր մեր:

¹ Լարեց — սնդուկի տեսակ.

Արկադիյ Պավլիչը նայեց ինձ ու քմծածաղով հարցրեց.

— N'est-ce pas que c'est touchant? (Սրտառուչ տեսարան է, չէ՞):

— Հա, աղա Արկադիյ Պավլիչ, — շարունակում եր անհանգիստ բուրմիստը, — ախար ես ինչպես ելավ: Սիրտս մղկտում ա, աղա ջան, ինչ կըլնեիր, վոր ձեր գալու մասին ինձի լուր տված լինեյիք: Ախր գիշերս վոնց կմաք եստեղ, ես կեղտի ու փսորի մեջ...

— Վոչինչ, Սոֆրոն, վոչինչ, — ժպտալով պատասխանեց Արկադիյ Պավլիչը, — այստեղ լավ է:

— Ասում եք լավ ա, ձեզ մատաղ. ու՛մ համար ա լավ, — մեզ, գեղացիներին համար. ամա ձեր բանն ուրիշ ա, արեւիկդ դուրբան... Թողությունն անես ինձ, անխելքիս, գլուխս կորցրեկ եմ, աստված վկա գովել եմ:

Այդ միջոցին ընթրիք բերին. Արկադիյ Պավլիչն սկսեց ուտել: Ծերունին իր վորդուն գուրս քշեց, իբր թե ոգն ե ապականում նա:

— Նո՛ւ, ծերուկ, ինչպես է, սահմանները կտրեցի՞ք, — հարցրեց պոն Պենոչկինը, վորը պարզապես աշխատում եր իր խոսելու վոճը նմանեցնել գլուղացիներին խոսվածքին:

— Կտրեցինք, աղա, քու վողորմածութենով: Յերեկ չե առջի որը թողելք ձեռ քաշեցինք: Խլինովցիները, ճիշտ ա, առաջ մի քիչ կոտրատվեցին, աղա, ճիշտ ա, կոտրատվեցին... Պահանջում եյին... պահանջում եյին... ինչե՛ր ասես պահանջում եյին. հիմար մարդիկ են ելի, խելադար են: Ամա մենք, աղա ջան, աստված բանը աջողի, վոնց վոր հարկն եր, շնորհակալ յեկանք միջնորդին, Միկոլայ Միկոլայիչին, գոհացրինք նրան. բոլորը քո հրամանովն եյինք անում. վոնց վոր հրամանդդ ասել եյիր, ենպես ել արեցինք, ամեն բան Յեգոր Դմիտրիչի գիտությամբ արեցինք:

— Յեգորն ինձ գեկուցել է, — պարծենալով վրա բերեց Արկադիյ Պավլիչը:

— Հապա, հապա, աղա ջան, Յեգոր Դմիտրիչի, ենպես է:

— Դե ուրեմն դուք այժմ գո՛հ եք:

Սոֆրոնը հենց դրան եր սպասում:

— Ա՛խ դուք, հայրեր մեր, բարերարներ մեր, — նորից սկսեց ծոր տալ: — Թողություն կանեք մեզ... Մենք հո գիշերացերեկ ձեզ համար աղոթք ենք անում աստծուն, աղա ջան: Մեր հողը, դորդ ա, քիչ ա...

Պենոչկինը նրան ընդհատեց.

— Դե լավ, լավ, Սոֆրոն, գիտեմ, վոր դու պարտաճանաչ ծառայող ես... Դու անյն ասա՛ կալած հացի քանակն ինչքան է:

Սոֆրոնը հոգոց հանեց:

— Դե ի՛նչ ասեմ, աղա ջան, քանակն ենքան ել շատ չի: Իրավունք տվեք, Արկադիյ Պավլիչ, հայտնել ձեզ մի բան: (Այստեղ նա ձեռքերը տարածելով և մի աչքը կկոցելով կըռացաւ ու մոտեցավ պոն Պենոչկինին): Մեր հողի վրեն մեռած մարդ գտնվեց:

— Ինչպե՛ս թե:

— Իմ խելքս ել չի հասնում, աղա, հայրեր դուք մեր. կեբեվա, վոր դուշմանի դործ ա: Լավ վոր մեռելը հարեանի սահմանին մոտիկ եր. ամա ի՛նչ մեղքս պահեմ, մեր հողի վրա եր: Յես հրամայեցի եղ մեռելը իսկույն քարշ տալ հարեանի հողը, քանի ուշ չեիր, վերջն ել պահապան կանգնացրի ու մեր մարդկերանց հրամայեցի սկի ձեն-ծպտուն չհանեն, սուս անեն: Ամա ստանալոյին (զավառակապետին), ինչ ել լինի հայտնեցի, տես, ասեցի, ինչե՛ր են պատահում. վերջը մի լավ թեյ պատիվ արեցի, ու շնորհակալ ել յեկա... Ու ի՛նչ եք կարծում, աղա ջան, մեղքը հո ուրիշների վրին մնաց. ախր

սպանված մարդ ասելը հանաք բան չէր... երկու հարյուր ութըլին... սկի փող չէր:

Պ-ն Պենոչկինը շատ ծիծաղեց իր բուրմիստրի հնարագիտության վրա ու միքանի անգամ ինձ գլխով նրա վրա ցույց տալով ասաց «*Quel gaillarda*» (Ի՞նչ ոյինբազն է, հը°):

Այնինչ դուրսը բոլորովին մթնեց: Արկադիյ Պավլիչը հրամայեց սեղանը հավաքել ու խոտ բերել: Սպասավորը մեզ համար սավաններ փռեց, բարձերը շարեց, մենք պառկեցինք: Սոֆրոնը վաղվա համար հարկավոր հրամաններն ստանալուց հետո տուն գնաց: Արկադիյ Պավլիչը, քնելուց առաջ, միքիչ ել խոսեց ուսմ մուժիկի գերազանց հատկությունների մասին և խակույն ել նկատեց, վոր այն ժամանակվանից, յերբ կալվածքի կառավարիչը Սոֆրոնն է, Շեպիլովսկու գյուղացիների վրա վոչ մի գրոշի ապառիկ չկա... Պահապանը թակեց իր թակիչը. յերեխան, վոր ըստ յերեւելոյթին, դեռ չեր կարողացել համակվել անձնագոհության զգացումով, սկսեց ձվվձալ խրճիթի մի անկյունում... Մենք քնեցինք:

Մյուս որ վեր կացանք բավական վաղ: Յես արդեն պատրաստվում եյի Ռյաբովո գնալու, բայց Արկադիյ Պավլիչն ուզեց ինձ ցույց տալ իր կալվածքը և շատ խնդրեց, վոր մնամ: Յես ինքս ել ուզում եյի գործով համոզվել, վոր այդ պետական մարդը՝ Սոֆրոնը գերազանց հատկություններով և ոժտված: Յեկավ բուրմիստրը: Նա հազել եր կապույտ արմյակ, վորի վրայից կապել եր կարմիր կտորեց գոտի: Խոսում եր յերեկվանից շատ տվելի քիչ, աչալուրջ աչքերով անթարթ նայում եր տիրոջը, հասուն և խելացի պատասխաններ եր տալիս: Նրա հետ միասին մենք կալատեղ գնացինք: Մեր հետեից գալիս եր Սոֆրոնի վորդին՝

յերեք արշինանոց տանուտերը, վորն, ինչպես ամեն բանից կարելի յեր յեղրակացներ, մի շատ անխելք մարդ եր. մեզ միացավ նմանապես Ֆեդոսեյիչ գեմսկին¹, վոր պաշտոնաթող զինվոր եր, ահագին բեխերով ու դեմքի մի չափազանց տարրերինակ արտահայտությամբ. կարծես շատ առաջ նա սարսափելի վախեցած և յեղել մի բանից, ու դեռ մինչև այժմ ել ուշքը չի գալիս: Մենք գննեցինք կալը, փակ կալսարանը, տաք խրճարանը, մարագները, հողմաղացը, գոմը, աշնանացան արտը, կանեփուտը. ճիշտ վոր, ամեն ինչ հիանալի վիճակ ունեւ. միակ գյուղացիների տխուր դեմքերն եյին, վոր տարակուսանքի մեջ եյին գցում ինձ: Բացի ոգտավետի մասին մտածելուց, Սոֆրոնը հոգ եր տանում նաև հաճելի մասին. բոլոր խանդակները շուրջը նա ջրուռներ եր տնկել, կալում, դեղերի միջև ճանապարհներ եր բաց արել ու ավազ փռել, հողմաղացի գլխին հողմացույց եր հաստատել՝ արջի կերպարանքով, բերանը բաց ու կարմիր լեզվով. աղյուսաշեն գոմի ճակատին տվել եր հունական ֆրոնտոնի²: Ինչ-վոր մի ձև ու այդ ֆրոնտոնի տակ գրել եր. «Շինված ա Շիպիլովկա դեղում հազար ութ հարյուր քառասուն թիվին, Սույն Գոմս»: — Արկադիյ Պավլիչն զգացվել եր. նա սկսեց ֆրանսերեն լեզվով ինձ բացատրել բահրայի անցած գյուղացիների ոգուտները, սակայն միաժամանակ նկատեց, վոր կոռն ու բեզարը կալվածատիրոջ համար ավելի յե ոգտակար, — բայց ի՞նչ արած... Սկսեց բուրմիստրին խրատներ տալ, թե ինչպես և պետք կարտոֆիլ ցանել, ինչպես և պետք անասունների կերը մթերել և այլն: Սոֆրոնն ուշադրությամբ

¹ Զեսսկիյ — գավառակի կամ վոաչինի գրագիրը, վոր վոստիկանի պաշտոն եր վարում.

² Фронтон — շինվածքի ճակատի այն յեռանկյունաձև մասը, վոր դրվագված և քիվով (կարնիզով), իսկ յերբեմն նաև քաղաքակաղարքով.

ականջ եր դնում տիրոջ ասածներին, յերբեմն առարկուղներ եր անում, բայց այլևս չեր մեծարում Արկադիյ Պավլիչին «մեր հայր» և «բարերար» խոսքերով, այլ մի գլուխ շեշտում եր, թե հող քիչ ունեն, թե լավ կլիներ լրացուցիչ հողաբաժին գնել: — Ի՞նչ կա վոր, գնեցեք իմ անունով, — ասաց Արկադիյ Պավլիչը, — յես դեմ չեմ»: — Այս խոսքերին Սոֆրոնը վռչինջ չպատասխանեց ու միայն մորուքն եր շփում: «Բայց հիմա ավելորդ չի լինի, յեթե անտառ գնայինք», — նկատեց պ-ն Պենոչկինը: Մեղ խսկույն հեծնելու ձիեր բերին, մենք ճանապարհ ընկանք դեպի անտառ կամ, ինչպես մեզանում ասում են, «արգելված» վայրը: Այս «արգելված» մի սարսափելի խուլ և վայրի տեսք ուներ, վորի համար Արկադիյ Պավլիչը գովեց Սոֆրոնին ու նրա ուսերին թփթիացրեց: Անտառաբուծության նկատմամբ պ-ն Պենոչկինը հետևում եր ռուսական հասկացողություններին. հենց այստեղ ել նա պատմեց ինձ մի վերին աստիճանի զվարճալի, ինչպես ինքն եր ասում, դեպք, թե ինչպես մի հանաքչի կալվածատեր փետեց իր անտառապահի մորուքի համարյա կեսը՝ ապացուցելու համար, վոր ծառերը տակից կտրատելով անտառն ավելի խիտ չի դառնում... Բայց ուրիշ հարցերում և՛ Սոֆրոնը և՛ Արկադիյ Պավլիչը — յերկուսն ել նորմուծություններից չեյին խուսափում: Յերբ գյուղը վերադարձանք, բուրմիստը տարավ մեզ ցույց տալու նորերս Մոսկվայից բերել տված քամհարը (թեղ քամելու մեքենան): Քամհարը, ճիշտ վոր, լավ եր գործում, բայց յեթե Սոֆրոնն իմանար, թե ինչ անախորժություն եր սպասում իրեն և իրա տիրոջն այս վերջին զբոսանքի ժամանակ, հավանորեն նա մեզ հետ միասին տանը կմնար:

Ահա ի՞նչ պատահեց: Մարագից դուրս գալուս, մենք ականատես յեղանք հետևյալ տեսարանին: Դռնից միջանի

քայլ հեռու, կեղտոտ ջրափոսի մոտ, ուր անհող կերպով յերեք հատ բադիկներ եյին ճղվում, ծուներ իջած յերկու գյուղացիներ եյին կեցել, մեկը՝ մի վաթսուն տարեկան ծերուկ, մյուսը՝ քսան տարեկան ջահել տղա, յերկուսն ել քաթանե կարկատած շապիկ հագած, վոտքերը բորիկ, մեջքերին չվան կապած: Զեմսկին՝ Ֆեոդոսեյիչը նրանց մոտ կանգնած ինչ վոր խիստ նեղանում — անհանգստանում եր և, հավանորեն, նրան կհաջողվեր համոզելու նրանց, վոր հեռանան, յեթե միքիչ ուշացած լինեյինք մարագում, բայց, հենց վոր մեզ տեսավ, շիփ-շիտակ կանգնեց տեղում քաբացած: Այստեղ եր կանգնած նմանապես տանուտերը բերանաբաց ու տարակուսանքից բռնեցնեք սղմած: Արկադիյ Պավլիչը խոփովեց, շրթունքները կծեց և մոտեցավ խնդրեք ունեցողներին: Յերկուսն ել խոնարհ յերկրպագություն արին:

— Ի՞նչ եք ուզում: Ի՞նչ ե ձեր խնդրածը, — հարցրեց նա խիստ ձայնով ու միքիչ քթում խոսելով: (Գյուղացիներն իրար նայեցին ու մի խոսք արտասանել չկարողացան, այլ միայն աչքերը կկոցեցին և սկսեցին շուտ-շուտ շունչ առնել):

— Նու, ի՞նչ կա, — շարունակեց Արկադիյ Պավլիչը և խսկույն դարձավ Սոֆրոնին, — ի՞նչ ընտանիքից ես: — Տորոլեկի ընտանիքից են, — դանդաղությամբ պատասխանեց բուրմիստը:

— Դե ի՞նչ եք լռել, — ասաց նորից Պ-ն Պենոչկինը, բերաններումը լեզու չկա, ի՞նչ ե: — Դու ասա, ի՞նչ ե հարկավոր քեզ, — ավելացրեց նա, գլխով նշան անելով ծերուկ-նուն: — Դե մի՛ վախիր, հիմա՛ր:

Մերունին յերկարացնելով իր մուգ դարչնագույն կրնձապատ վրդը, ծուռ բաց արեց կապտացած շրթունքները, խաղաղ ձայնով արտասանեց. «Տերութին արա, աղա՛» ու նորից նրա վոտքերն ընկավ ու ճակատով գետնին կպավ:

Ջահել գյուղացին նույնպես գլուխը խոնարհեց: Արկադիյ Պավլիչն իր արժանապատվութիւնը գիտակցելով նայեց նրանց շէնքին, գլուխը հետ գցեց ու վոտքերը միքիչ չռեց:

— Ի՞նչ ե: Ումից ես գանգատավոր:

— Խղճա տեր, թող շունչ քաշենք... տանջանքից աչք չենք բացում: (Ծերունին դժվարութեամբ եր խոսում):

— Ո՞վ ե քեզ տանջողը:

— Հով պտի ընի, ադա ջան, Սոֆրոն Յակովլիչն, ելի՞: Արկադիյ Պավլիչը լուռ մնաց:

— Անունդ ի՞նչ ե:

— Անտիպ ա, ադա ջան:

— Իսկ սա ով ե:

— Եղել իմ վորդին ա, քեզ մատաղ:

Արկադիյ Պավլիչը նորից սուս արեց ու բեխերը շարժեց:

— Ուրեմն ինչո՞վ ե նա քեզ տանջել, — նորից խոսեց նա բեխերի միջով ծերունուն նայելով:

— Տունս քանդեց, ադա ջան, բան չթողեց: Երկու տղերանցս, քեզ մատաղ, հերթից դուրս դինվոր տարավ, հիմի յեւ վոքրին ա ձեռիցս խլում: Երեկ ել, ադա ջան, վերջին կովս քչեց-տարավ ու հլա պառավիս ել քոթկեց, հրեա, ես մարդը: (Նա ցույց տվեց տանուտիրոջ վրա):

— Հ՛ըմ, — արտասանեց Արկադիյ Պավլիչը:

— Միք թույլ տա, ադա, վոր վոտով գլխով կորչենք:

Պ.ն Պենոչկինը խոժովեց:

— Իսկպեհս, ի՞նչ ե նշանակում այս, — հարցրեց նա դժգոհութեամբ:

— Հարբեցողի մեկն ե, — պատասխանեց բուրմիստը, — ծուլերից ե: Հրեա հինգերորդ տարին ե, վոր պարտքի տակից չի կարում դուրս գա:

— Իմ տեղ Սոֆրոն Յակովլիչը տվավ պարտքս, ադա

ջան, — շարունակեց ծերունին, — վրա հինգ տարի ա անցել, վոր իմ տեղակ պարտքս ա վճարել, ու են որից ա, վոր ընկել եմ ճանկը, ադա ջան, չեմ կարում ազատվում... և ահա...

— Բա ինչո՞ւ համար դու այնքան պարտքի տակ ես մնացել, — խստութեամբ հարցրեց պ.ն Պենոչկինը: (Ծերունիը գլուխը կախեց): — Յերեկ խմել ես սիրում ողետնից ողետուն քաշ գալ: (Ծերունին ուզում եր խոսք ասի): Դիտեմ ի՞նչ պտուղ եք, — բարկացած շարունակեց Արկադիյ Պավլիչը, — ուրիշ բան ու գործ չունեք, խմեցեք ու վառարանի վրա պառկեցեք, իսկ ձեր տեղը թո՛ղ կարգին գյուղացին տուժի:

— Ինքն ել անսամուսի մեկն ե, — տիրոջ խոսքերը լրացրեց բուրմիստը:

— Նու, այդ ինքնըստինքյան հասկանալի յե: Դա սովորական յերեւոյթ ե, այդ բանը շատ անգամ եմ նկատել: Ամբողջ տարին քաշ ե գալիս, աներեսություններ ե անում, հիմա ել յեկել, վոտքերս ե ընկնում:

— Ադա ջան, — հուսահատ կերպով խոսեց ծերունին, — ասածու սիրուն տեր կանգնի, ախար մեղք եմ: Ինչի՞ յեմ յես անսամուս: Վոնց վոր ասածու առջև խոստովանք ասում եմ, ադա ջան, վոր ել հալ չի մնացել մեջս: Սոֆրոն Յակովլիչն աչքով աչք չունի վրես նայելու, ամա պատճառն ի՞նչ ա, չեմ գիտում: Թող ասոված տեսնի՞ նրա դատաստանը: Տո՛ւնս քանդեց, քեզ մատաղ... Հիմի յեւ վերջին տղայիս ա ուզում... (Ծերունու դեղնադուլն ու տրորված աչքերում արցունքի կաթիլներ պսպղացին): — Աստճու խաթեր, տեր կանգնի մեղ, պաշտպանիր...

— Ու մենակ մեղ չի, — ուզում եր ասել Ջահել գյուղացին... Արկադիյ Պավլիչը հանկարծ կատաղեց:

— Իսկ քեզ ով ե հարցնում, հը: Քեզ բան հարցնող չկա,

ուրեմն դու պետք ե լուես... Ի՞նչ ե նշանակում սա: Լռիր, ասում եմ քեզ, լռի՛ր... Ա՛խ, տեր իմ աստված, սա ուղղակի բռնուտ ե: Վնչ, բարեկամ, յես թույլ չեմ տա բռնուտ սարքելու... Յես... (Արկադիյ Պավլիչը մի քայլ առաջ գնաց, բայց, հավանորեն, հիշեց իմ ներկայութիւնը, յերեսը շուռ տվեց ու ձեռքերը գրպանը խոթեց):

— *Je vous demande bien pardon, mon cher* (խնդրեմ ներողամիտ յեղեք, սիրելիս), — ասաց նա կեղծ ժպիտը յերեսին և ձայնն զգալապես ցածացնելով: — *C'est le mauvais côté de la médaille* (սա մեղալի մյուս յերեսն ե)... Նու, լավ, լավ, — շարունակեց նա, առանց գյուղացիների վրա նայելու — յես կհրամայեմ... լավ, գնացեք... (գյուղացիները վտաքի չեյին կանգնում): — Դե, ասացի ձեզ, չէ... Լավ: Արդեն գնացեք, յես կհրամայեմ, ասում եմ ձեզ:

Արկադիյ Պավլիչը մեջքը շուռ տվեց:

— Մշտական գոգոհութիւններ, — ասաց նա ատամների միջով և խոշոր քայլերով գնաց դեպի տուն: Սոփրոնը գնաց հետևից: Չեմսկին աչքերն եր չուել և, կարծես պատրաստվում եր ինչ-վոր խիստ հեռու ցատկել: Տանուտերը փախցրեց բաղերին ջրափոսից: Խնդրատունները միքիչ ել կանգնեցին իրենց տեղում, իրար նայեցին ու վտտները հաղիվ-հաղ քարշ տալով, առանց հետ նայելու, իրենց տունը գնացին:

Յերկու ժամ անց՝ յես արդեն Ռյաբովում եյի և իմ ծառի մի գյուղացու՝ Անպադիստի հետ պատրաստվում եյի վորսի գնալ: Ինչե և իմ մեկնելը Պենոչկինը ամբողջ ժամանակ բարկանում եր Սոփրոնի վրա: Յես Անպադիստի հետ խոսք բաց արի Շիպիլովկայի գյուղացիների, պ-ն Պենոչկինի մասին, հարցրի՝ գիտե՞ արդոք այնտեղի բուրմիստրեն:

— Ո՛ւժը, Սոփրոն Յակովլեիչի՞ն... բան ասաց:

— Ի՞նչ մարդ ե:

— Շու՛ն ե, մարդ չի. մինչև Կուրսկ ել գնաս, եղպես շուն չես գտնի:

— Այսի՞նքն:

— Ախր եդ Շիպիլովկեն մենակ անունով ա պատկանում եդ իքին, Պինկին ա, ինչ ա. ախր տերը նա չի, Սոփրոնն ա տերը:

— Մի՞թե:

Հենց իմանաս իրա սեփական մուլքն ա. գեղացի չկա, վոր նրան պարտք չունենա. բանեցնում ա՝ վոնց վոր իր մշակներն ըլնեն. մեկին՝ արաբաներով ա զրկում, մեկելին՝ մի ուրիշ տեղ... ամենքի յել զահաւն տարել ա:

— Նրանք, կարծեմ, հող քիչ ունեն:

— Քի՞չ: Մի՞նակ խլինովցիներից ութնասուն որավար ա վերցրել քրեհով, մերոնցից ել մի հարյուր քսան. ես քեզ յեղավ հարյուր հիսուն որավար. ամա նրա վաստակը հո մենակ հողից չի. նա շահվում ա համ ձիերից, համ տավարից, համ կուպրից, համ յեղից, համ կանեփից, համ ինչից վոր սիրտդ ուզի... խելքը գլխին մարդ ա, շատ ա խելոք... վոր իմանաս ինչքան հարուստ ա եդ գաղանք: Ամա գեղն են են ա, վեր կովարար ա: Նա մարդ չի՞, գաղան ե: Շուն վոր ասում են, դրուստ վոր շուն ա, շուն:

— Բա ինչո՞ւ նրանից չեն գանգատվում:

— Բան ասեց. ինչացո՞ւ յա եդ գանգատն աղի համար. հո պարտք չի՞ թողում, ամբողջը հավաքում ա: Ապա մի գնա, — միքիչ մտածելուց հետո ավելացրեց նա, — և գանգատվի: Չէ, նա քեզ... ապա մի վորձի... Չէ, նա քեզ են հալի կզցի, վոր...

Յես հիշեցի Անտիպին ու պատմեցի նրան, ինչ վոր տեսիլ եյի:

— Դե, — վրա բերեց Անպադիստը, — հիմի նա հում-հում

կուտի նրան: Տանուտերը հիմի նրա հոգին կհանի: Ի՞նչ քամ-
բախտ մարդ ա եդ վողորմելին: Ախր զուր տեղն ա երվում
նրա ձեռին... Ժողովքին նրա՝ եդ բուրմիստրի հետ կռիվ
ա ունեցել, համբերությունից դուրս ա յեկել... Մեծ բան:
Հրես են ա, վոր Անտիպին պլոկում ու պլոկում ա: Ու տա-
կանց կպլոկի: Ախար նա, եդ շունը, մեղա աստծու, մեղա,
հո գիտի ում պոչից բռնի: Հարուստ, դովլաթավոր հալեվոր-
ներին ձեռ չի տալի եդ քաչալ սատանան, ամա ես խեղճին
տրորում ա: Ախար Անտիպի տղերանց, առանց վախտը դա-
լու, գինվոր զրկեց եդ, մեղա տիրոջս, լիրբ անդգամը, շունը:
Մենք գնացինք վորսի:





Ответ. редактор Г. А. Потени
Пом. техред. Д. М. Джинибалаян

Издание №509/4769 — X. Сдано в набор 3 ноября 1935 г. Подпи-
сано в печать 19 декабря 1935 г. Формат—Б6 (125x146). Об'ем
1 125. п. л. (70.000 зн. в. 1 б. л.) Тираж 1500. Уполкрайлит Р--2455
Заказ. № 5199.

Типография им. Стачки 1902 года в г. Ростове н-Д.

«Ազգային գրադարան»



NL0322176

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.
Цена 30 КОП.

14.403

И 1235

На армянском языке

И. С. ТУРГЕНЕВ

Б У Р М И С Т Р

091450-61

**АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО**
Ростов н-Д Буденновский пр. № 30

Գ . Ր Ս . Պ Ս . Հ Ե Ս Տ Ը
Ռաստով-Դան Մոսկովսկայա № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)